

Պետական պատվերով և աջակցությամբ
հրատարակված գրականության բաշխում

Պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված գրականության բաշխում ՀՀ Մշակույթի նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանը նախատեսել է այցելություններ Հայաստանի Հանրապետության 10 մարզեր:

2018 թվականի դեկտեմբերից Արագածոտնի մարզ այցելությամբ մեկնարկել է ՀՀ Մշակույթի նախարարության կողմից պետական պատվերով և աջակցությամբ մեծաքանակ գրականության բաշխման գործընթացը: 2019թ. այցելություն է եղել նաև Արմավիրի մարզ: Գրականության բաշխման գործընթացի շրջանակներում մարտի 25-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները այցելեցին Արարատի մարզ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում Արարատի մարզպետարանին տրամադրվել է 4158 միավոր պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված գրականություն: Աշխատակիցները այցելեցին նաև Օհան Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարան, նվիրաբերվեց 142 միավոր գրականություն: Պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված գրականությունը հիմնականում գեղարվեստական, մանկական, երաժշտական, հանրագիտարանային և ալբոմային հրատարակություններ են: Գրականության բաշխման գործընթացը նպատակ է հետապնդում լուծել մարզերի համայնքային և դպրոցական գրադարանների համալրման խնդիրները, աշխուժացնելով գրադարանների գործունեությունը՝ միաժամանակ հանրությանը իրազեկելով նոր հրատարակված գրականությանը:

